ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հուլիսի 11-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Երևանում, Կառավարական տանը, պաշտոնական այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Տաճատի Սարգսյանին: Այդ առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էր Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Հայոց Հայրապետի և Մինիստրների խորհրդի մեծարգո պարոն նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում: Զրույցին մասնակցում էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը: